

**ՀԱՅՈՑ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹԵԱՆՆ ԱՌՆՉՈՒՈՂ  
ԴՐՈՒԱԳՆԵՐ՝ ԵՂԻՇԷԻ  
ԱՐԱՐԱԾՈՑ ԳԻՐՔԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԻ ՄԷՋ**

ԳԵՈՐԳ ՄԱՂՈՅԵԱՆ

Հայոց դիցաբանության եւ յատկապէս հայ ժողովրդի ծագումնաբանության հարցերում լոյս սփռող Հայկի եւ Բէլի ասանդագրոյցի ուսումնասիրութիւնն առաւելաբար հիմնուած է եղել Մովսէս Խորենացու հաղորդած տեղեկութիւնների վրայ: Սակաւ դէպքերում են դրանք զուգադրուել Մեբեոսի, անհամեմատ ակնթիւքի՝ Թովմա Արծրունու, Վարդան Արեւելցու եւ այլոց գրառումների հետ: Այս հարցում, թերեւս, էական դեր է խաղացել հեղինակների ժամանակաշրջանը. հնագոյն, հետեւաբար նաեւ ամենահաւաստի, աղբիւր է համարուել Պատմաօր երկը:

Սակայն Ի. դարի հայագիտության նուաճումներից կարելի է համարել Լեւոն Խաչիկեանի կատարած աշխատանքը<sup>1</sup>, որի շնորհիւ պարզուեց, որ Դաւիթ Քահանայի, Տիմոթէոս Վարդապետի, Վարդան Արեւելցու *Արարածոց Գիրքի* խմբագիր մեկնութիւնների շատ քաղուածներ Եղիշէ Վարդապետի համապատասխան երկից են<sup>2</sup>, այսինքն՝ Ե. դարի գրական արդիւնք: Այս իրողութեամբ է, որ դրանցում պահպանուած՝ հայոց ծագումնաբանությանն առնչուող սակաւ տեղեկութիւնները մեծ կարեւորութիւն են ձեռք բերում:

Անշուշտ, *Մեկնութիւն Արարածոց Գրքին* գրելիս Եղիշէն նպատակ չի հետապնդել արձանագրելու հին հայոց հոգեւոր ունեցուածքը. նա անխտոր ընթացել է իր նախանշած արահետով, բայց երբ ուղիները հատուել են՝ աստուածաշնչեանի կողքին, պատմիչն արձանագրել է եւ հայկական ասանդութիւնը: Եւ բնական է, այսօր հետաքրքրուել, թէ Եղիշէն, ի՞նչ տեղերից էր քաղում նիւթը:

Իր աշխատութեան մէջ Խաչիկեանն, ի թիւս շատ այլ հարցերի, անդրադարձել է նաեւ Եղիշէի օգտագործած աղբիւրներին<sup>3</sup> («Օննոց Գրքի՝ Եղիշէի օգտագործած բնագիրը, Եւսեբիոս Եմեսացի եւ Բարսեղ Կեսարացի, Յովհան Ոսկերեան, Եւսեբիոս Կեսարացի, Փիլոն Եբրայեցու երկերը, Հերմէս Եռամեծ, Պլատոն, Հերակլիտ Եփեսացի, Բարոյախօս, Դիոնիսիոս Թրակացի»<sup>4</sup>), ճշգրտել դրանց հանգամանքները, անգամ պարզելով, թէ *Աստուածաշնչի* ի՞նչ թարգմանութիւն է եղել ձեռքի տակ:

Մեր քննութեան համար նիւթ հանդիսացած հատուածների պարագայում կան օրինակներ, երբ հեղինակն ուղղակիօրէն ընդգծում է, որ տուեալ պնդումը պատկանում է իրեն նախորդած մտածողներին. «*զի ասէն իմաստունքն, թէ աղեղնդ, զոր Արամազդայ գաւտի կոչեն, ոչ է*

գոյատր...», «...գոր ասեն էթէ մեհեանս շինէին, զի լինիցի նոցա սպաւեն ի ջրհեղեղէն...»<sup>5</sup>: Բերեալների մէջ ամենաբնորոշը «ասեն իմաստունքն» կապակցութիւնն է, որ անվիճելի է դարձնում քաղուած լինելու հանգամանքը: Եւ նոյնիսկ «իմաստուններ»ին յիշատակելիս, երբ օգտուում է հներից, Եղիշէն պարտադիր յարում է՝ «ասեն»: Այսպէս է նաեւ այն դէպքերում, երբ ինքը համաձայն չէ հնաւանդ վարկածին եւ պատրաստուում է առաջ քաշել իր կարծիքը. ինչպէս՝ «...Արարատու լեառն ոմանք զԿորդուացն ասեն, այլ ճշմարտութիւնն յայտնի առնէ զնա ի Մասիս գոլ...»<sup>6</sup>, կամ՝ «...գործ դնէր հողմոյ եւ բեկոտեալ ցրուէր զշինուածսն, ոչ փլուցանէր ի վերայ շինողացն ի կորուստ նոցա, թէպէտ ասեն զԲէլ յայնմանէ մեռեալ, ոչ այլ յետայնորիկ ի Հայկայ՝ որդոյ Թորգոմայ...»<sup>7</sup>: Նմանատիպ հակադրութիւնների շնորհիւ դժուար չէ համոզուել, որ բացի Խաչիկեանի մատնանշած հեղինակներից, որոնցից «ոմանք», օրինակ, «ասել են», թէ Կորդուաց լեռներում կանգ առաւ տապանը, Եղիշէն ունեցել է եւս մի աղբիւր, որի միջոցով «ճշմարտութիւնը յայտնի է դառնում», մի աղբիւր, որը ոչ միշտ է համընկնում հայ մատենագրի կիրառած գրաւոր յուշարձանների հետ: Այս աղբիւրը բացառապէս Հայքին էւ հայոց ծագումնաբանութեանը աղերսուող տողերում է հանդէս գալիս՝ ի յայտ բերելով նաեւ «կողմնապահութիւն» յօգուտ հայոց ազգի, ինչն առիթ է տալիս կարծելու, որ այն իր ծագմամբ հայկական է:

Աներկբայելի է, որ առնուազն տապանի հանգրուանելուն զուգահեռ սկսում է հայկական աւանդութիւնը, ուստի Եղիշէի մեկնութեան պահպանուած հատուածներից առանձնակի ուշադրութեան արժանի են յատկապէս յետջրհեղեղեան դէպքերի մեկնութեան դրուագները: Ահա Ծննդ. Ը. 3-8ի առնչութեամբ Վարդապետն ասում է. «Եւ նուազէր ջուրն յետ ճԾ. [150] աւուրն եւ նստաւ տապանն այսինքն Արարատոյ յամսեանն եաւթներորդի յԲԷ. [27] ամսոյն ի լերինն Սարաբադայ, այսինքն՝ Արարատոյ: Եւ ջուրն նուազէր մինչեւ ի Շ. [10] երորդ ամիսն:

Արարատու լեառն ոմանք զԿորդուացն ասեն, այլ ճշմարտութիւնն յայտնի առնէ զնա ի Մասիս գոլ: Գոյ ի Պաղեստին եւ ի Գամիքս Արարատ, այլ մերս Այրարաթ լսի: Զի երկու գետովս եւ տապանաւն գերիվերոյ եմք քան զյոլովս: Եւ թէ զի նչ աւգուտ է. նախ՝ իմաստութեան պատճառ է մեզ՝ անմոռաց պահելով զյիշատակն Աստուծոյ արարչութեանն եւ ակն ունել փոփոխմանն ի նոյնն. Ապա եւ երիս բարեխաւսս ունիմք առ Աստուած, զի այն, որ պատճառ եղել փրկութեան միոյ տանն, լիցի եւ մեզ: Եւ գետքն հրաւիրակք են մեզ, զի յակն զնասցուք ուստի գան եւ սքա»<sup>8</sup>:

Նախ՝ նկատենք, որ չնայած արտաքին պարզութեանը, հատուածները դժուարընկալելի են, եթէ չասենք՝ յաճախ անհասկանալի: Օրինակ՝ հենց առաջին տողից իմանում ենք, որ 150րդ օրուանից յետոյ

ջուրն սկսեց յետ գնալ. «*եւ նստաւ տապանն այսինքն Արարատոյ յամենանն եաւթներորդի ի ԲԷ. ամսոյն ի լերինն Մարարադայ...*»: Խօսքի կառուցուածքը պարտադրում է, որ լինի օրինակ այսպէս. «եւ նստեց տապանն՝ այսինքն կանգ առաւ»: «Նստաւ» բայը «այսինքն»ից յետոյ պէտք է իրեն համարժեք՝ գործողութիւն ցոյց տուող բառով հաւասարակշռուէր, ինչպէս շարունակութեան մէջ՝ «Մարարադայ, այսինքն՝ Արարատոյ» կառոյցում, մի տեղանունանը յաջորդում է միւսը: Մինչդէռ բնագրում «նստաւ»ից յետոյ Արարատ անունն սեռականի ձեւն է: Այստեղ պէտք է ուշադրութիւն դարձնենք նաեւ այն իրողութեան, որ Եղիշէի *Մեկնութիւնի* «Արարատոյ» եւ արդէն դրանից բխող «Արարատու» ձեւերը չեն համընկնում *Աստուածաշնչի* հայերէն թարգմանութիւններում հանդիպող «Արարատայ» հոլովաձեւի հետ: Եւ ընդհանրապէս «Արարատոյ» եւ առաւել էւս «Արարատու» ձեւերը քիչ են հանդիպում: Նման այլ պարագայ, թերեւս, Առաքել Դարիժեցու *Գիրք Պատմութեանցի* Ոսկան Երեւանցու հրատարակութիւնն է<sup>10</sup>, որի տիտղոսաթերթին կարդում ենք. «*Մակս դիպուածոց Հայաստանեայց՝ եւ էւս գաւառին Արարատոյ՝ եւ մասին Գողթան գաւառի*»<sup>11</sup>:

Մեկնութեան նոյն հատուածում հանդիպող, բացատրական՝ «այլ մերս Այրարաթ լսի» տողը որոշակիօրէն լոյս է սփռում Արարատ-Արարադ տարբերութեան վրայ: Անցեալում ընդունուած է եղել, որ Հայկը «*չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ*»<sup>12</sup> քաղուածական տողում «Արարադայ» երկիրը համապատասխան համարել Վանայ լճի մերձակայքին: Ստեփանոս Մալխասեանի պնդմամբ. «*Արարադի երկիրը Արարատեան նահանգը չէ, Հայաստանի կենտրոնում, այլ նրանից արեւմտահարաւ ընկած երկիրը: Վանայ լճից հարաւ*»<sup>13</sup>: Մանուկ Աբեղեանի տողերով. «*Նա չուզելով ենթարկուել Բէլին, գալիս է «Արարադայ» երկիրը, ոչ թէ «Այրարատ», այլ «Արարադ» գաւառը Կորդուաց աշխարհի մէջ (Վանայ ծովից դէպի հարաւ-արեւելք)*»<sup>14</sup>: Մինչդէռ Միքայէլ Չամչեանցը դ-տ տարանջատում չի կիրառում. «*...եւ խաղաց ի կողմն հիւսիսոյ յերկիրն Արարատայ. եւ եկեալ ի դաշտավայր մի՝ բնակեցաւ ի լեռնոտ ի միում*»<sup>15</sup>:

Եղիշէն էւս ծանօթ չէ Արարադ-Արարատ տարբերութեանը, նա գիտի երեք Արարատ՝ Պաղեստինի, Գամիրքի եւ «մերս», ու խօսում է արտասանական առանձնայատկութիւնների մասին՝ «մերն Այրարաթ է արտասանում (կա՛մ հնչում)»: Հետեւաբար՝ *Մեկնութիւնի* շարադրանքի համաձայն, ոչ թէ Հայքում կային երկու բոլորովին տարբեր տեղանքներ՝ Արարադ եւ Արարատ, այլ այս տեղանունն աշխարհագրութիւնն աւելի մեծ էր:

Մեր կարծիքով՝ Բաբելոնից հեռանալիս Հայկն ուղեւորում է ոչ թէ Վանայ լճի կողմերը, այլ Արարատեան դաշտ՝ Մասիս: Եթէ զուտ

տրամաբանօրէն փորձենք պատկերացնել՝ Հայկը ոչ թէ պետք է ընթանար մի անյայտ ուղղութեամբ՝ ուր աչքը կտրի, դէպի անորոշութիւն, այլ պետք է ձգտէր բնականօրէն համար պիտանի, կամ, առաւել եւս, յարմար տեղ գտնել: Այս դէպքում պետք է նկատի ունենալ, որ աշխարհով մէկ սփռուելուց առաջ, ջրհեղեղից փրկուածները բաւականին երկար բնակուել էին տապանն ընդունած լեռան շրջակայքում: Եւ եթէ ոչ Հայկը, ապա գոնէ նրա նախնիները մտապահած կը լինէին այդ բարեբեր երկրի մասին յուշերը: Այս տեսանկիւնից, եթէ ընդունենք, որ տապանը հանգրուանել էր Սասիսի վրայ, Հայկը պիտի շարժուէր դէպի Արարատեան դաշտ՝ իր հօր կամ պապի մօտ, եւ ոչ թէ ցայսօր անյայտ տեղադրութիւն ունեցող Արարադ: Սեբեոսն ուղղակիօրէն նշում է, որ Հայկի ընտրած բնակավայրն ամայի տեղանքում չէր, այն նախկինում բնակեցուած էր եղել. «*Ձի չունեաց խաղաց գնաց Հայկն ի Բաբելոնէ կնանն եւ որդւովքն եւ ամենայն աղիսին հանդերձ, եւ չոգաւ բնակեցաւ յերկիրն Արարադայ, ի տանն որի լեռնոտիսն, որ գառաջինն շինեալ էր Ջրուանայ*»<sup>16</sup>: Իսկ ռուս պատմաբան Սերգէյ Գլինկայի բնորոշմամբ՝ «...այն ժամանակ Հայկը իր ցեղով շտապեց գնալ հայոց երկիրը, ուր ապրում էր իր հայրը՝ Գատլասը, Նոյի թոռը, որը ցնծութեամբ դիմաւորեց որդուն»<sup>17</sup>: Եւ, թերեւս, կարելոր չէ, թէ Հայկը գնում էր հօր, պապի, կամ հօրպապի մօտ: Նա կարող էր գնալ նաեւ Նոյ նահապետի մօտ հանգրուանելու, եթէ, ի հարկէ, Նոյը դեռ ողջ էր: Իսկ որ Նոյը բնակուում էր, աւելի որոշ՝ Նոյեան տունը գտնուում էր Լուբար-Ղուբար-Արարատի վրայ (կամ շրջակայքում), երեւում է, ասենք, *Յոբելէնից Գիրքից*<sup>18</sup>, ինչպէս եւ հայկական աւանդազրոյցներից: *Յոբելէնից Գիրքը* հաստատում է նաեւ «Ջրուանի տանը» բնակուելու մասին Սեբեոսի միտքը՝ Է. Գլխում նշելով, որ Սէմը, Քամը եւ Յաբէթը մէկական «քաղաք» կառուցեցին «Լուբարի՝ մերձակայքում»<sup>19</sup>: Եւ եթէ առաջնորդունք Խորենացու վերլուծութեամբ՝ «...Ջրուանն եւ Տիտանն եւ Յայտոսթէ լինէին իշխանք երկրի,- որ ինձ թուին Սէմ, Քամ եւ Յաբէթ»<sup>20</sup> ու համարենք, որ անունների հերթականութիւնը բացարձակապէս նոյնական է՝ կը ստացուի, որ Հայկը նախ հաստատուեց Արարատի մերձակայքում՝ Սէմի կառուցած «տանը»:

Թերեւս կարելի է կարծել, որ միեւնոյն վայրը մատնանշող Արարատ եւ Սարարադ տեղանուններից երկրորդը **ս-ա** (սրանք փոքրատառով իրար կողքի գրելիս պարզապէս հինգ անգամ կրկնուում է միեւնոյն տառամասնիկը **ուււ**) նշանագրերի նմանութեան պատճառով զրկուել է առաջին՝ «Ս» բաղաձայնից՝ աւելի ուշ ընկալուելով որպէս այլ տեղանուն: Եւ Խորենացու ու Եղիշէի (եւ այլոց) երկերում հանդիպող կիրառութիւնները զուգադրելով՝ կը ստանանք Սարարադ-Արարադ-Արարատ-Այրարաթ **դ-տ-թ**, **յ** եւ մի դէպքում **ս** բաղաձայնով զանազանուող շարքը, որի բաղադրիչները, եթէ նոյնիսկ տարբեր վայրեր

մատնանշելիս լինեն, ծագմամբ եւ իմաստով վստահաբար նոյնն են լինելու:

Գեղեցկահիւս է Եղիշէի խօսքը տապանի՝ Հայքում հանգրուանելու մասին: Հաւանաբար թերահաւատօրէն տրամադրուած այլեւայլ քննադատների շուրթերից քաղելով՝ մեկնիչը հարց է տալիս. «Եւ թէ զի նչ աւգուտ է», որ տապանը Հայքում կանգ առաւ, եւ անմիջապէս պատասխանում՝ «Չի երկու գետովս եւ տապանաւն (որ մեր երեք բարեխօսներն են Աստծու առջեւ) գերիվերոյ եւք քան գոլովս»<sup>21</sup>: Իսկ հեղինակի՝ «զի այն, որ պատճառ եղեւ փրկութեան միոյ տանն, լիցի եւ մեզ» տողը թարգմանելիս, մեր կարծիքով, «զի այն»ից յետոյ հարկ է՝ յաւելել «երկիրը» կամ «աշխարհը» գոյականներից մէկը, եւ կը ստացուի՝ «որովհետեւ այն աշխարհը, որ մի ընտանիքի փրկութեանը ծառայեց, կը լինի նաեւ մեր փրկութեան գրասկանը»: Հակառակ դէպքում, ինչպէս տեսնում ենք, նախադասութեան առաջին մասը ազգի երեք բարեխօսների մասին է, եւ ստորոգեալը յոգնակի է (ունիմք), իսկ յետոյ դառնում է եզակի (այն, որ պատճառ եղեւ): Անկասկած «այն»ը չի կարելի կապել կատարեալ Էութեան՝ Աստծու հետ: Չի կարելի առնչակցել նաեւ տապանի հետ, որովհետեւ, ինչպէս երեւում է *Մեկնութիւնի* յետագայ շարադրանքից, տապանը փնտռել են եւ չեն գտել: Եւ, բացի այս, դժուար թէ «պատճառ փրկութեան... լիցի եւ մեզ» ասելով, Պատմիչը միայն իր մերձաւոր հարազատներին (առաւելագոյնը ուր ինքն ինքն) նկատի ունենար:

Միւս հատուածը, ուր քրիստոնէական-կանոնական մտքերի մէջ է սողոսկել հեթանոսական աւանդութիւնը, հետեւեալն է.

*«Եւ նշանն էւս տայ ողորմածն թերահաւատիցն:*

*Չաղեղն իմ դնեն, յամպս, ասէ, եւ եղիցի ի գումարեալ ինձ զամպս ի վերայ երկրի, տեսից զաղեղն եւ յիշեցից գուխտն իմ:*

*Աղեղն դնէ զնշանն, զի ոչ հասարակ ջնջէ գերկիր, այլ մասամբ հարկանէ, իբր նետ յաղեղան է արձակեալ զմի որ հարկանէ. Ի մէջ բազմաց եւ միոյ մասին եւ անդամոյդ ի պիխոցն...*

*Եւ է ծիածանդ, որ ձգի յամպս յաւուրս անձրեւաց, բայց զի ասեն իմաստունքն, թէ աղեղնդ, զոր Արամազդայ գաւտի կոչեն, ոչ է գոյաւոր, այլ պատահումն եւ գոլորշ ի գէջ ամպոյ եւ արեւոյ, յոչ գոյիցն երեւումն, ուստի ի պարզի ոչ երեւի, եւ ոչ ի գիշերի, այլ Աստուծոյն՝ գոյաւոր եւ հաստատուն պարտ է լինել նշան, եւ Աստուծոյ միայն յայտնի միշտ, մեզ աներեւոյթ, զի ոչ ասաց տեսանէք, այլ՝ «տեսից եւ յիշեցից գուխտն իմ» ուստի յայտ է, թէ կայ իմն յարակայ նշան ի ձեւ աղեղուն, ըստ բացատրութեան ամպոյ եւ պարզոյ, եւ յամենայն ժամ անլուծանելի, եւ Աստուծոյ միշտ յիշելի եւ գիտելի»<sup>22</sup>:*

Ինչպէս տեսնում ենք, ծիածանն ընկալուել է որպէս Արամազդ աստծու գօտի: Հետաքրքիր է, թէ որտեղից է ծագում այդ երեւոյթը:

Ընդհանրապես ծիածանն այլազան կերպերով է հանդես գալիս տարբեր ժողովուրդների հաւատալիքներում: Այն մերթ ընդունում է իբրև՝ ա) նետ կրակելու գործիք՝ աղեղ, բ) օձ, գ) զարդ մասանի, գլխակապ, գօտի, դ) կամուրջ, ե) գահ եւն.<sup>23</sup>: Այստեղ ուշադրութիւն է պետք դարձնել զէնքին եւ խնդրոյ բուն առարկայ գօտուն: Օրինակները շատ չեն, եթէ անտեսենք աւելի ուշ ի յայտ եկածները: Հինդուիզմի պարագայում Շիւս աստծուն անպարտելի դարձնող զէնքերից էին կայծակ-նիզակն<sup>24</sup> ու ծիածան-աղեղը<sup>25</sup>: Հրէական աստուծոյնը երկրորդում է այս ընկալումը. անձրեւի ժամանակ երկնակամարում յայտնուող ծիածանը բնորոշում է «qäšät» (աղեղ) գոյականով, որ սկզբնապէս միայն նետ կրակելու գործիքն է մատնանշել<sup>26</sup>: Քրիստոնէութեան մէջ այն խորհրդանշում է ուխտը, եւ Եղիշէն պատկերաւոր կերպով մեկնում է զէնքի եւ ծիածանի նմանութեան պարագան՝ «*զի ոչ հասարակ ջնջէ զերկիր, այլ մասամբ հարկանէ, իբր նետ յաղեղանէ արձակեալ զմի որ հարկանէ*»<sup>27</sup>:

Ջրադաշտականութեան մէջ խօսում է Չինաստ կամրջի մասին, որ կապում էր այս եւ հանդերձեալ աշխարհները: Հանգուցեալների հոգիները պիտի անցնէին այս կամրջով. մեղաւորների համար այն բարակում էր, անմեղների համար լայնանում, հնարաւորութիւն ընձեռելով անվնաս անցնել կամրջով եւ յաւերժանալ Ահուրա Մազդայի մօտ: Այս իսկ պատճառով այն անուանուել էր Cinvatô Peretûm՝ դատաստանի կամուրջ<sup>28</sup>: Հնդեւրոպական շատ ցեղերի աստուծոյններում տարածուած ներկայ պատումը յաճախ մանրամասնում է, որ կամուրջն այս կամ ծիածանն է, կամ Ծիր Կաթինը<sup>29</sup>: *Աւետաշում* նման պնդում ուղղակիօրէն չկայ, սակայն ինչպէս գտնում է հոլանդացի աստուածաբան Կորնելիս Պետրուս Թիելէն՝ «*Չինաստ կամուրջը, որ յաճախ ստուգաբանում է իբրև «հաւաքողի կամուրջ», փոխառուած է հին Արիական դիցաբանութիւնից եւ ամենայն հաւանականութեամբ նախնական շրջանում ծիածանն էր, որ միաւորում էր դրախտն ու երկիրը*»<sup>30</sup>: Սրան զուգահեռ զրադաշտականութեան մէջ Ահուրա Մազդան նկարագրում է փայլարձակ հանդերձանքով եւ գօտիով, որ զարդարուած էր աստղերով<sup>31</sup>: Եթէ մի կողմ թողնենք աստղերով զարդարուած լինելու իրողութիւնը, ապա Ահուրա Մազդայի գօտին կարող է համապատասխանել ծիածանին:

Միւս կողմից պետք է նկատի ունենալ նաեւ, որ Եղիշէն Ոսկեդարի այն հեղինակներից էր, որոնք օտար յատուկ անունները, յատկապէս աստուածութիւնների, փոխարինում էին հայոց մէջ եղած համարժեքներով (ասենք՝ Օրիոն-Հայկ եւն.): Ուստի «*աղեղնը, զոր Արամազդայ գաւտի կոչեն*» կապակցութիւնը դիտարկելիս, պետք է հնարաւոր համարենք նաեւ, օրինակ, «աղեղը, որ Զեւսի գօտի են կոչում»

ձեռք: Մակայն, ինչպէս գիտենք, յունական դիցաբանութեան մէջ ծիածանը Իրիսն (Ίρις) է, լրաբեր աստուածուհի եւ ոչ թէ գոտի<sup>32</sup>:

Հայ իրականութեան մէջ Արամազդի գոտի-ծիածանին անդրադարձել է Ա. Պետրոսեանը. «*Ծիածանի մի շարք հին հայկական անուանումներ կապուած են «գոտի» գաղափարի հետ՝ գոտի, տէրունեան գոտի, տիրական գոտի, գոտի աստուածական եւ աստուածակամար, այսինքն՝ «աստծու գոտի». յայտնի է նաեւ Արամազդայ գոտի կամ գոտի Արամազդայ ձեռք, հին հայոց գերագոյն աստուած Զեւս-Արամազդի անունից, առաջին անգամ՝ Փիլոնի թարգմանութեան մէջ (բնագրի այդ հատուածները չեն պահպանուել, բայց յունարէնում նման անուանում գտնել յաջողուեց), երկրորդը՝ Թովմա Արծրունու մօտ: Այսպիսով՝ հնից մինչեւ մեր օրերը, հայկական առասպելաստեղծ մտածողութեան մէջ ծիածանն ընկալուել է որպէս գոտի, որը գօտեւորում է երկինքը՝ երկնային աստծուն կամ դիցաբանական որեւէ երկնային կերպարի: Ի միջի այլոց, բակարեգական/լուսնի, այսինքն՝ «արեւի/լուսնի շրջանակ/գոտի» է կոչուել եւ արեւի ու լուսնի շուրջը երբեմն երեւացող ծիածանագոյն շրջանակը»<sup>33</sup>: Այստեղ Թովմային իբրեւ երկրորդ յիշատակելով ի ցոյց է դրում, որ կա՛մ հեղինակը ծանօթ չէ Խաչիկեանի աշխատութեանը, կա՛մ համամիտ չէ դրա հիմնադրոյթին, այլապէս իբրեւ երկրորդ կը յիշատակէր Եղիշէի *Մեկնութիւնը*: Իսկ ինչ վերաբերում է «չպահպանուած» եւ բնականաբար «չգտնուած» փիլոնեան հատուածին, այն վենետիկեան հրատարակութեան 148-149 էջերում է. «*Ոմանք կարծեն աղեղն ասել. զի յոմանցն կոչեցեալ Արամազդայ գոտի, ի ձեռոյն զհաստատուն նշանակ առեալ վասն ծիածանին... իսկ Արամազդայ գոտիդ առանձինն գատ ուրիշ բնութիւն ինքնըստինքեան ոչ ունի... զի եւ ի տուրնջեան՝ զի ամպոյ մթացելոյ՝ Արամազդայ գոտին յառաջագոյն ոչ երեւի... քանզի ահա մինչդեռ ամպ է, ըստ Արամազդայ գոտոյդ երեւոյթ ինչ ոչ լինի»<sup>34</sup>: Բնական է, որ սա յունարէնում չէր կարող լինել, որովհետեւ «The Ζητήματα και λυσεις, *Quaestiones et solutiones*, which first became more widely known through the publication... from the Armenian»<sup>35</sup> եւ պահպանուել է միայն հայերէն, ու զարմանալի չէ, որ Փիլոնի ամբողջական ժառանգութիւնը հրատարակելու առթիւ ասում է. «շարքերով հրատարակուած ստեղծագործութիւններ «Loeb classical library» 10 հատորով (յունարէն բնագրեր եւ անգլերէն թարգմանութիւններ) եւ երկու լրացուցիչ հատորները (թարգմանութիւն հայերէնից)»<sup>36</sup>: Ինչ վերաբերում է յօդուածագրի՝ «*Այսպիսով՝ հնից մինչեւ մեր օրերը, հայկական առասպելաստեղծ մտածողութեան մէջ ծիածանն ընկալուել է որպէս գոտի*» հետեւութեանը, ապա սխալը երեւում է ի ը իսկ մատնանշած աղբիւրներից. «Արամազդի գոտի» կապակցութեան առաջին կիրառութիւնը Փիլոնից թարգմանուած գրքում է, որ աղբիւր է ծառայել**

նաև Եղիշեի համար, իսկ Թովման, որ նոյնպես ծանօթ է Երբայեցու երկին, գոտու մասին խօսում է այսպես. «...ծիածանդ, զոր ունանք հուր մեկնեալ յամպոյ ասացին, եւ որդիք տարրապաշտիցն՝ գոտի Արամագոյ», յետագայ շարադրանքում կիրառելով՝ «յառասպելս նոցա»<sup>37</sup> ձեւը, որ դժուար թէ «առասպելաստեղծ» հայոց մասին լինէր:

Այնուհետեւ բաւականին մանրամասն Եղիշէն անդրադառնում է աշտարակաշինութեանը՝ ի յայտ բերելով ուշագրաւ մանրամասներ. «Յետ այնորիկ ասէ. էր ամենայն երկիր լեզու մի եւ բարբառ մի ամենեցունց: Եւ եղև ի խաղալն նոցա յարեւելից գտին դաշտ մի յերկիրն Մինաար, եւ բնակեցան անդ: Եւ ասէ այր ցընկեր իւր. եկայք արկցուք աղիւս եւ թրծեսցուք զայն հրով: Եւ եղև նոցա աղիւսն ի տեղի քարի եւ կուպր ի տեղի շաղախի: Եւ ասեն. եկայք շինեսցուք մեզ քաղաք եւ աշտարակ, որոյ գլուխն լինիցի մինչեւ յերկինս:

Զմիաբանութիւնն ի չարն այսպէս ամբաստանէ. էր, ասէ, ամենայն երկիր լեզու մի, որպէս ձայնք եւ բարբառք ի ձայնական գործեացն յառաջ եկեալ միանան ի լեզու եւ ի շրթունս, որք դրունք են ազգի-ազգի եւ զանազան խաւսից: Այսպէս եւ տանուտեարքն երկրի ի բաց կացեալ ի բարոյ բնաւին միաբան գործէին զվատթարն եւ խորհէին: Ընդ որս եւ յաղագս դրախտին խորհեցան, զոր լուան տնկեալ յարեւելս, յորմէ զրկեցին զինքեանս նախաստեղծքն եւ գնացին խնդրել զնայ. եւ իբրեւ ոչ գտին, զի ջուր ծովու եւ շամանդաղ ծածկեալ էր զնա, յիշեցին եւ զտապանն. եւ այն եւս չէր յայտնի: Եւ երկեան ի նոյնպիսի պատուհասէ, զի գործք իւրեանց նոյնպիսիք էին»<sup>38</sup>:

Եղիշեի բերած սուրբ գրային տողերում առաջինն աչքի են ընկնում ուրիշի ուղղակի խօսքի հատուածները, որ շատ հետազոտողների քննութեան նիւթ են հանդիսացել: «Եկայք արկցուք աղիւս եւ թրծեսցուք զայն հրով» եւ «Եկայք շինեսցուք մեզ քաղաք եւ աշտարակ, որոյ գլուխն լինիցի մինչեւ յերկինս» տողերը մեկնելիս՝ անգլիացի աստուածաբան Ջոն Գիլը (1697-1771) յիշատակում է, որ մի շարք հրեայ հեղինակների կարծիքով այս խօսքերը Նեմրութն (Բէլը) ուղղել է իր ժողովրդին<sup>39</sup>: Սակայն Գիլն ինքը կասկած է յայտնում, թէ արդեօք այդ ժամանակ Բէլն արդէն ծնուած էր, կամ հասել էր բաւականին հասուն տարիքի<sup>40</sup>: Կարելի է յիշել կոթողային բացատրութիւնների հեղինակներ Ադամ Քլարքի (1760/1762-1832)<sup>41</sup> եւ Ալբերտ Բարնսի (1798-1870)<sup>42</sup> մեկնութիւնները նոյն հատուածի կապակցութեամբ, ուր հեղինակները, «խորամուխ» լինելով նիւթի մէջ, ընդամենը եզրայանգել են, թէ՛ աղիւսով էին կառուցում, որովհետեւ քարը քիչ էր<sup>43</sup>: Եղիշէն ներկայացնում է ջրհեղեղից փրկուածների վախն ու սարսափը նոր աղէտներից, ինչը նրանց դրդում է որոնել դրախտի այգին: Սակայն չեն յաջողում, որովհետեւ «ջուր ծովու եւ շամանդաղ ծածկեալ էր զնա»: Փրկութեան միւս յոյսը տապանն էր, բայց

«այն եւս չէր յայտնի», ուստի որոշեցին քաղաք եւ աշտարակ կառուցել: Սրան յաջորդում է բարեխնեան աշտարակի՝ հայ գրաւոր գրականութեան մէջ ամենահին նկարագրութիւնը: «Քաղաք գատելութիւնն յայտ առնէ եւ աշտարակն գերկիւղն ի ջրհեղեղէն: Եւ նոքա գայն ապաւինեցան եւ ոչ յԱստուած, զոր ասեն էթէ մեհեանս շինէին, զի լինիցի նոցա ապաւէն ի ջրհեղեղէն: Նախ քաղաք եւ տեղի վաճառուի գիւտս պիտոյիցն եւ ապա գաշտարակն հաստահիմն՝ լայնամիջոց, սերտաշէն, աստիճանաձեւ ելանելիւք, փորափողոց, լոյսանցոյց պատուհանաւք ընդ լեռն առ եւ բարձրութիւնն, երկայն ճանապարհաւք՝ ելիւք եւ իջիւք, խորովեալ հրով աղիւսիւք եւ կշայիւք ծեփովք թեթեւ ի բարձրութիւն: Սկսեալ ի սկիզբն ծննդեանն Ռագաւու մինչեւ ցՆ. [40] ամն ոչ դադարեալք զամառն եւ զձմեռն վասն բարեխառնութեան տեղոյն, մինչեւ հասուցին յործուտ եւ ի մղձկութաւղն, որպէս եւ ասեն, ուր ոչ կարեն ընթանալ թռչունք, զի այրին թեւաթափեալք եւ անկանին յերկիր:

Տասնամսեան ճանապարհ, որպէս ասեն, ընդ ելանելն եւ ընդ իջանելն: Եւ իշխանք՝ նոցա Բէլն եւ Լամսուրն եւ Հայկն: Եւ Բէլն որսայր նոցա որս, որք անխոնջ եւ անվաստակ՝ արք եւ կանայք: Եւ ոչ ոք ասէր ց[ը]նգերն, թէ՛ շատ գործեցի, այլ թէ՛ դու շատ գործեցեր:

Ոմանք ասեն թէ սայլ ոսկւոյ եւ արծաթոյ ի հիմանէն մինչեւ զաւարտն դնէին շուրջանակի ընդ միջոցս աղիւսոյն պահելով, զոր աստի անդի դնէին պատելով զոսկին ի պահել զորմն անխախտուտ եւ լինել զանձ որդւոց իւրեանց»<sup>44</sup>:

Ի դէպ, գիտնականները յայտնաբերել են աշտարակի՝ Ք.ա. 604-562ով թուագրուող մի փորագրութիւն<sup>45</sup>:

Սրանից յետոյ ամենահին հաւաստի աղբիւրը Հերոդոտոսի թողած նկարագրութիւնն է.

«Այս պարիսպը (արտաքին) զրահ է. մի երկրորդ պարիսպ եւս կայ ներսից, միւս պարսպից ոչ շատ թոյլ, բայց առաւել նեղ: Քաղաքի երկու մասերից մէկի մէջտեղում կանգնած է թագաւորական պալատը՝ շրջապատուած բարձր եւ հզօր պարսպով, իսկ միւսի (մէջտեղում)՝ Չեւս Բէլի պղնձադուռ սրբավայրը, որն իմ ժամանակ եւս կանգուն էր, այն քառակուսի է, իւրաքանչիւր կողմը երկու ասպարէզ երկարութեամբ: Սրբավայրի մէջտեղում կառուցուած է հզօր աշտարակ, մէկ ասպարէզ երկարութեամբ ու լայնութեամբ, այս աշտարակի վրայ բարձրանում է մէկ ուրիշը, սրա վրայ՝ մէկ ուրիշը, մինչեւ ութ աշտարակ: Այնտեղ բարձրանալու համար դրսից բոլոր աշտարակների շուրջ աստիճաններ են կառուցուած: Աստիճանների միջին մասում հանգստատեղ կայ եւ հանգստանալու բազմոցներ, որտեղ նստելով, բարձրացողները հանգստանում են: Վերջին աշտարակի վրայ կայ մեծ տաճար, իսկ տաճարում՝ մեծ եւ լաւ յարդարուած մահիճ, որի մօտ գտնուում է նաեւ

նսկէ սեղան: Այստեղ ոչ մի արձան չկայ եւ ոչ մի մարդ այստեղ չի գիշերում, բացի տեղացի մի կնոջից, որին, ինչպէս պատմում են քաղղէացիները, այդ աստծու քուրմերը, աստուած (իր համար) ընտրում է բոլոր կանանց միջից»<sup>46</sup>:

Ինչպէս տեսնում ենք, Եղիշէի նկարագրութիւնն էապէս տարբերում է Հերոդոտոսի պատկերած աշտարակից: Եթէ Հերոդոտոսի աշտարակում լոկ պաշտամունքի սեղանն էր ոսկուց, Եղիշէի տողերում՝ «սալք ոսկւոյ եւ արծաթոյ ի հիմանէն մինչեւ զաւարտն դնէին շուրջանակի ընդ միջոցս աղիւսոյն պահելով, զոր աստի անդի դնէին պատելով զոսկին ի պահել զորմն անխախտուտ եւ լինել զանձ որդւոց իւրեանց»<sup>47</sup>:

Աշտարակաշինութեան մասին վկայում է նաեւ *Յոբէլենից Գիրքը*, որ մանրամասնում է աշտարակի չափերը (2.484 մ. բարձրութիւն), եւ կառուցման տեւողութիւնը (43 տարի)<sup>48</sup>, ինչն էապէս չի տարբերում հայկական աղբիւրում մատնանշուող «Խ. [40]» տարուց: Մօտաւորապէս նոյնն է նաեւ միդրաշեան գրականութեան մէջ<sup>49</sup>: Իսկ 40 եւ 43 տարիների խնդրով, օգտակար է *Յոբէլենից Գիրքի* անգլերէն առաջին թարգմանութիւնը. «and they built forty years, and three years they were making bricks»<sup>50</sup>:

Բայց հին աղբիւրներից ոչ մէկն, այնուամենայնիւ, զուգադրելի չէ Եղիշէի պատկերաւոր նկարագրութեան հետ: Եթէ այլ դէպքերում խօսուում է հիմնականում աստիճանների մասին, որոնցով պիտի բարձրանային մարդիկ, Եղիշէն «աստիճանաձեւ ելանելիւք»ից բացի յիշում է նաեւ «*փորափողոց... երկայն ճանապարհաւ՝ ելիւք եւ իջիւք*», ինչից, թերեւս, կարող ենք ենթադրել, որ կարելի էր բարձրանալ, ասենք, հեծեալ:

*Փոքր Ծննդոցում* պահպանուած 2.484 մ. բարձրութեան յիշատակութիւնն ամենայն հաւանականութեամբ համահունչ չէ Եղիշէի՝ «*Տասնամսեան ճանապարհ... ընդ ելանելն եւ ընդ իջանելն*» տողին: Անկախ ճանապարհի դժուարանցանելիութիւնից եւ չափման միաւորից, սա այն բարձրութիւնը չէր, որ անցնէին 10 ամսում, կամ բարձրացողը հասնէր «*յործուտ եւ ի մղձկութաւդն*» եւ *առաւել եւս՝ «ուր ոչ կարեն ընթանալ թռչունք, զի այրին թեւաթափեալք եւ անկանին յերկիր»*: Ընդ որում՝ չենք կարող իմանալ բարձրանալու համար որքան ժամանակ էր հարկաւոր, եւ որքան՝ իջնելու. թերեւս այդ միջոցը հաւասար մասերի էր բաժանուում, որովհետեւ ինչպէս գրում է Յովհաննէս Թլկուրանցին՝

*Աշտարակին բարձրութիւն ճանապարհ էր Ե. ամսեան,*

*Յերկիւղէ ջրհեղեղին հայցէին հընար փրկութեան*<sup>51</sup>:

Այժմ ընդունենք, թէ մէկը որոշել է ոտքով անցնել այդ տասնամսուայ ուղին: Համարենք նաեւ, որ նա ունէր այդ ուժն ու կարողութիւնը, բայց

մի թե՛ որեւէ մարդ, կամ հսկայ, ի գորու կը լինէր իր հետ վերցնել 300 օրուայ պաշար: Ի դէպ, այդ պարագային փրկութիւն չէ նաեւ բեռնակիր կենդանիների կիրառութիւնը. իւրաքանչիւր նոր օգնական ուժ, նոր բեռ էր պայմանաւորում:

Աշտարակաշինութեանը նախորդող շրջանի հարցով ուշադրութեան արժանի են Կեղծ-Փիլոնի տողերը<sup>52</sup>. «Թորգովի որդիներն են Աբիուդը (Abiud), Սափաթը (Saphath), Ասապլին (Asapli), Ջեպթիրը (Zepthir)... Դուդեննիի (Duodennin) որդիներն են Իթէրը (Itheb), Բէաթը (Beath), Փենէչը (Phenech):

Մրանք են, որ ցրուեցին ու տարածուեցին եւ բնակուեցին երկրի վրայ պարսիկների եւ մեդացիների հետ, ինչպէս եւ կղզիներում, որ ծովում են: Եւ Փենէչը Դուդենիի (Dudeni)<sup>53</sup> որդին, գնաց եւ հրահանգեց, որ ծովային նաւեր պիտի կառուցուեն... Այնուհետեւ Քամի որդիները Նեմրութին իրենց արքայ կարգեցին, իսկ Յաբէթի որդիները Փենէչին դարձրին իրենց առաջնորդ: Սեմի որդիները հաւաքուեցին միասին եւ Ջեքթանին (Jectan) դարձրեցին իրենց արքայ»<sup>54</sup>: Կեղծ-Փիլոնի առաջին տողերը լրացնում են Օննդ. Ժ. Գլխի հատուածները, որտեղից իմանում ենք Թորգովի սերունդների օտարացուած անունները: Սակայն, ինչպէս կարելի է նկատել, Դուդեննիի կամ Դուդենիի սերունդներից Փենէչը դառնում է Յաբէթեանների առաջնորդ, ինչով Կեղծ-Փիլոնը հակասում է Աստուածաշնչում տրուող ծննդաբանութեանը: Համացանցային հանրագիտարանի պնդմամբ Դուդենին Եաւանի որդիներից էր, որ եբրայերէն Դ եւ Ռ տառերի նմանութեան պատճառով մեզ է հասել գրութեան երկակի եղանակով՝ Dodanim (דודנים) կամ Rodanim (רודנים), ուր imը յոգնակիակերտ է<sup>55</sup>: Իրականում առաւել ընդունելի է Ռ տառը, որովհետեւ այս հերոսը ռոդացիների նախնին է, եւ ոչ թէ դոդացիների<sup>56</sup>: Ինչեւէ, Կեղծ-Փիլոնի վկայութեամբ աշտարակաշինութեան ժամանակ Յաբէթեանների առաջնորդը Փենէչ անունով մէկն էր, եւ հետեւաբար կամ սա հակասում է նաեւ հայկական աւանդութեանը (միանշանակ հակասութիւն կայ Յաբէթեանների առաջնորդի ծագումնաբանութեան առումով, որ Թորգովից սերելու փոխարէն, Դուդենիի ժառանգն է դարձել), կամ Փենէչը պէտք է համարել Հայկի անուններից մէկը: Պտոյտների Գիրքը, Բերոսոսին վկայակոչելով, դիտարկուող շրջանի համար իբրեւ Յաբէթեանների առաջնորդ յիշում է Սաբատ<իուս> եւ Սատուրն՝ համապատասխանաբար սկիթացիների ու լատինների կողմից Հայկ նահապետի առնչութեամբ կիրառուած ձեւերը<sup>57</sup>: Արդեօք Փենէչը պիտի լրացնի այս շարքը: Բնականաբար ո՛չ, որովհետեւ նահապետը պիտի սերեր Թորգովի տնից: Եւ երբ նայում ենք Կեղծ-Փիլոնի Թորգովեանների շարքին՝ Աբիուդ, Սափաթ, Ասապլի, Ջեպթիր, Բ-պ-փ եւ դ-տ-թ եռաշարքութիւնը հաշուի առնելով, կը նկատենք, որ

Սափաթը եւ Սաբատ<իուս>ը նոյնանում են, եւ Փենէչի փոխարէն հեղինակը պիտի յիշատակէր հենց նրան:

Սակայն մէկ այլ դրուագով Կեղծ-Փիլոնի վկայածը համադրելի է Եղիշէի խօսքերին: Ինչպէս առաջինն է աշտարակաշինութեան ժամանակ երեք առաջնորդ յիշում՝ Նեմրոթ, Փենէչ, Ջեքթան, նոյնկերպ է նաեւ Եղիշէի մեկնութեան մէջ՝ «իշխանք՝ նոցա Բէլն եւ Լամսուրն եւ Հայկն»: Այսինքն աշտարակաշինութեան ժամանակ նահապետ-առաջնորդները երեքն էին, (եւ ոչ թէ միայն մէկը), եւ յարաբերութիւնները դեռ բացարձակապէս բարեկամական-եղբայրական էին՝ ինչպէս եւ երեւում է Եղիշէի տողերից. «*Բէլը որս էր անում նրանց համար...եւ ոչ որ չէր ասում ընկերոջը, թէ շատ աշխատեցի, այլ ասում էր՝ դու շատ աշխատեցիր*»:

Հայագիտութեան համար կարեւոր են նաեւ Եղիշէի խօսքերը, որ վերաբերում են լեզուների բաժանմանը: «*Եկայք իջցուք եւ խառնակեցուք զլեզուս դոցա*»:

*Արդ, ընդ Որդի եւ ընդ Հոգի է բանս, որովք արար զմարդն ազգ մի եւ լեզու մի: Խառնակելն ոչ թէ շփոթել է գնոսս, այլ զի եւ խառն գտանու ի յազգացոյ բառ եւ բան եւ անուն:*

*Ուստի եւ գեղեցկաբանութիւն եղև ի մի խոշոր լեզուէն. փափուկ՝ Հելէնն, սաստիկ՝ Հռոմայեցին, սպառնական՝ Հոնին, աղաչական՝ Ասորին, պերճական՝ Պարսիկն, գեղեցկազարդ՝ Այանն, ծաղրական՝ Գութն, տափախաւս, խաւարաձայն՝ Եգիպտացին, ճրճուողական՝ Հնդկն, համեղական Հայն, որ կարէ զամենն յինքն ամփոփել...*

*Իսկ թէ ո՞ր էր լեզուն, որ բաժանեցան ի նմանէ այլքն. Քաղդէացին է որ մնաց առ Եբեր, որպէս եւ արդ գտանին առ նոսա անուանք նահապետացն՝ Ադամ, Սէթ, Ենուվս, որ մերձ է առ ասորին եւ ոչ հեռի»<sup>58</sup>:*

Եղիշէի պարբերութիւնները բառացի հարազատութիւն են ցուցաբերում Միսիթար Այրիվանեցու *Պատմութիւնի* համապատասխան դրուագի հետ: Միակ էական տարբերութիւնը՝ «...բայց բուն լեզուն արապն, մնաց առ Եբեր, զոր ի յարութեանն այնու խօսիւմք»<sup>59</sup>, այսինքն նախնական լեզուն մի դէպքում քաղդէացիներին, միւսում արարներին վերագրելն է: Համաձայն Սուրբ Գրոց բառարանի՝ քաղդէացիները «*էին ի բնէ պատերազմող ժողովուրդ, որ կը բնակէին ի սկզբան Կորդուաց լեռներն ի հիւսիսոյ Ասորեստանի եւ Միջագետաց...*»<sup>60</sup>: Սրանք աստղաբաշխութեան եւ չափագիտութեան միջոցով փորձում էին պարզել այս կամ այն համաստեղութեան տակ ծնուածների ապագան: Այս գործում, քաղդէացիներից բացի, յատկապէս վարպետացած էին ասորիները, եգիպտացիները, փինիկեցիներն ու արաբացիները<sup>61</sup>:

Ինչէւէ. երկու մատենագիրները նախնական լեզուն կապում են Եբերի սերունդների հետ՝ յիշելով յատկապէս ասորիներին եւ արաբներին: Սակայն Եղիշէի ներկայ պնդման կողքին՝ հայերէնի եւ նախնական

լեզուի հարազատության կապակցությամբ, պետք է յիշել հեղինակի հետևելու խօսքերը. «Եւ նախաստեղծ մարդոյն աչաւք եւ մտաւք միանգամայն ելից զպակասութիւնն կոչելով անուանս կենդանեացն, զի ոչ վայրապար ինչ արար Աստուած, այլ զկարելորսն, վասն որոյ եւ ասէ. ամենայն շնչոյ կենդանոյ զինչ եւ անուանեաց Ադամ, այն անուն է նոցա: Զի ոչ անդէպս ինչ կոչէր, այլ զյարմարն եւ զնմանն, որպէս եւ զառիծն ի յառնլոյն, եզն՝ ի հեզութենէն, շունն՝ ի շողոքորթելոյն, կատուն՝ ի տանն կալոյն, խոզն՝ ի խուզողութենէն. եւ այլքն՝ նոյնպէս»<sup>62</sup>: Նախորդի նմանությամբ այստեղ որոշակի պնդում չկայ, թէ ո՞ր լեզուով է խօսել Ադամը, սակայն կենդանիների թուարկումն ու դրանց անունները հայերէն ստուգաբանելու փաստն անուղղակի կերպով խօսում է վերջինիս օգտին:

Նախնի լեզուի եւ հայերէնի նոյնության խնդիրն աստուածաբանական սպառիչ վերլուծության է ենթարկել Միքայել Չամչեանը եւ եզրայանգել. «Մարթէ ասել, թէ այն առաջին բարբառ՝ որով խօսէին մարդիկ յԱդամայ անտի մինչեւ ցրածանումն լեզուաց, հայոցն էր. որ եւ մնաց մինչեւ ցայժմ: Եւ այս կարէ հաստատիլ դիրքաւ...»<sup>63</sup>: Մրանից յետոյ Չամչեանը կուռ տրամաբանությամբ, մանրամասն դիտարկում է նախալեզուին անմիջականօրէն առնչուող ու անգամ յարակից բոլոր հնարաւոր՝ թեր, դէմ եւ կողմ հարցերն ու ծանրակշիռ փաստարկներով եւ խօսուն ապացոյցներով հիմնաւորում իր դրոյթը: Նա նաեւ կանխատեսում է, որ իր պնդումների հակառակորդները գիտական վերլուծութիւններին հակադրելու են «ազգային սնամաստութեան» մեղադրանքը, եւ դրան նոյնպէս կանխաւ պատասխանում է. «Այլ թէ որք համարիցի զայս ասել մեզ վասն ազգէ անտի Հայոց լինելոյ, ասեմք թէ ոչ վասն այդր զայդ պնդեմք, այլ՝ վասն ճշմարտութեան»<sup>64</sup>:

Չամչեանցի մտքերից մէկը խարսխուած է երկարատեւ դիտարկումների վրայ. «Այլ զայս մի ինչ պատշաճ համարիմ գրել. իբր զի տեսանեմք, զի որք միանգամ կատարելապէս եւ տիրապէս գիտեն զլեզու հայոց ըստ ամենայն յատկութեանց նորին եւ ըստ հնչման առոգանութեան, զամենայն բառ այլոց ազգաց՝ զոր ուսանին, կարեն ուղիղ արտասանել, որպէս թէ բնական բարբառ էր նոցա. իսկ այլ ազգք ոչ կարեն զբառս այլոց ուղիղ հնչել. որպէս եւ յայտնի ցուցանէ փորձն. որով էրեւի, թէ սկզբնական եւ հարազատ բարբառ է լեզու հայոց. իսկ այլքն ոչ, այլ՝ ածանցեալ ի նմանէ»<sup>65</sup>: Տեղին կը լինի նկատել, որ նման գաղափար արտայայտել է նաեւ Եղիշէն, որ մատնանշելով տարբեր ժողովուրդների՝ նախալեզուից ժառանգած հարստութիւնը, վերջում յաւելում է. «համեղական»<sup>66</sup> Հայն, որ կարէ զամենն յինքն ամփոփել»: Սա երկրորդ դէպքն է, որ Եղիշէն անուղղակի կերպով հաստատում է հայերէնի եւ

նախալեզուի նոյնութիւնը (կամ գոնէ խիստ մերձաւոր հարազատութիւնը). միայն նախալեզուն կարող է բոլորն ամփոփել իր մէջ:

Այսպիսով, եթէ փորձենք ի մի բերել եւ ամփոփել Եղիշէի *Մեկնութիւնի* մէջ առկայ դրուագները, կը ստանանք յետ-ջրհեղեղեան շրջանին եւ հայոց ծագումնաբանութեանը վերաբերող հետեւեալ շարադրանքը:

Երբ 150րդ օրուանից յետոյ ջուրն սկսեց նուազել, եօթերորդ ամսուայ քսանեօթերորդ օրը տապանը կանգ առաւ ոչ թէ Կորդուաց լեռներում, այլ Սարարաղ՝ այսինքն Արարատ լեռան վրայ: Ճիշտ է՝ Արարատներ կան նաեւ Պաղեստինում ու Գամիրքում, սակայն մերն արտասանելիս Այրարաթ է հնչում: Եւ մեր լեռան վրայ կանգ առած տապանի եւ մեր երկու գետերի շնորհիւ բարձր ու առաւել ենք շատերից, որովհետեւ նրանք մեր մշտական բարեխօսներն են Աստծու առջեւ...

Այնուհետեւ, երբ Նոյեան սերունդները բազմացան ու շատացան, արեւելքից տարածուեցին ու ցրուեցին: Եւ Մինասար երկրում մի դաշտ գտան եւ բնակուեցին այնտեղ: Եւ որովհետեւ ջրհեղեղի անը դեռ սրտներում էր, որոշեցին քաղաք եւ աշտարակ կառուցել, որի գագաթը պիտի մինչեւ երկինք հասներ, եւ ծառայէր նրանց փրկութեանը: Եւ երեքն էին նրանց իշխանները՝ Բելը, Լամսուրը եւ Հայկը, որ նահապետներն էին Նոյեան որդիներից սերող երեք ճիւղերի: Եւ բոլորն ապրում էին հաշտ ու համերաշխ: Ոչ ոք չէր մեղադրում ընկերոջը, թէ՛ եւ շատ աշխատեցի ու չարչարուեցի, իսկ դու քիչ: Իսկ Բելը որս էր անում անխոնջ աշխատող արանց եւ կանանց համար:

Եւ ամուր կառուցելու նպատակով հիմքից սկսած մինչեւ աշտարակի կատարը ոսկեայ եւ արծաթեայ սալիկներ էին դնում, որպէսզի որմն անխախտ պահեն, ինչպէս եւ իբրեւ գանձ ժառանգութիւն թողնեն իրենց որդիներին: Եւ կառուցեցին քառասուն տարի: Եւ աշտարակն աստիճաններ ունէր բարձրանալու համար, փողոցներ, լեռան պատուհաններ, որ լոյսը ներս թափանցի: Եւ բարձրանալու է՛ւ իջնելու համար տասնամսեայ ճանապարհ էր պէտք անցնել: Եւ ամբողջ աշխարհում մէկ լեզու էր ու մէկ բարբառ: Եւ ոչինչ չէր խանգարում նրանց, որ կառուցեն այն, ինչ կամենում էին: Ուստի Տէրն ասաց. *«Իջնենք եւ խառնենք նրանց լեզուն այնպէս, որ ոչ մէկը չհասկանայ իր ընկերոջ ասածը»:*

Եւ վերջապէս՝ մի հատուած *Մեկնութիւնի*ց, որ հայոց ծագումնաբանական առասպելի այլընտրանքային աւարտ է ուրուագծում. *«Ողորմեցաւ Աստուած զուր վաստակելոցն եւ ոչ տայր նոցա քակել, զի մի՛ կրկին աշխատ արասցէ զնոսա, այլ գործ դնէր հողմոյ եւ բեկոտեալ ցրուէր զշինուածսն, ո՛չ փլուցանէր ի վերայ շինողացն ի կորուստ նոցա, թէպէտ ասեն զԲէլ յայնմանէ մեռեալ, ո՛չ այլ յետ այնորիկ ի Հայկայ՝*

որդույ թորգումայ: Քանզի տկարաց՝ իւրոց ձեռագործաց՝ մարդկան՝ որք տիւմարութեամբ առ Աստուած դիմեալ երթային խնայաւդեղեալ զանճառելի հոտ դրախտին առեալ արկանէր. զեւթանասուն եւ երկու զիւրեանց տանուտէրաւքն եւ զնոցին ազգակցաւքն»<sup>67</sup>: Եղիշէին փաստօրէն ծանօթ է այն տեսակէտը, որ Բէլը մահացաւ՝ մնալով աշտարակի աւերակների տակ, սակայն պատմիչն ինքը այդ տեսակէտի կողմնակիցը չէ: Բայց, անկախ այն բանից, թէ Եղիշէն համամիտ է, թէ ոչ, հեղինակի այս հաղորդմամբ ունենում ենք Հայկի եւ Բէլի հակամարտութեան երեք տարբեր հանգուցալուծում: Հայկական աւանդաբայանքի համաձայն Բէլն սպանուում է. *Պտոյտների Գիրքի* տարբերակում Հայքի արքան խուսափում է Նեբրովթի հետ առճակատումից եւ հեռանում դէպի Լատին աշխարհը<sup>68</sup>, իսկ *Մեկնութիւնի* պարագայում հնարաւոր է համարում, որ Բէլը զոհ գնացած լինի Աստծու բարկութեանը: Այստեղ ականատես ենք լինում, թէ ինչպէս է նիւթը «խմբագրուել, փոփոխուել»՝ յարմարեցուելով տուեալ ցեղախմբի «շահերին եւ նկրտումներին»: Հայոց տարբերակում ազգի նահապետն է յաղթանակ տօնում, *Պտոյտների Գիրքը* չէր կարող պարտուած ճանաչել Բէլին՝ այն աստծուն, որի քուրմն էր պատմութեան այդ հատուածի համար աղբիւր հանդիսացած Բերոսոսը: Իսկ երրորդ դէպքում պատումը չէզոք տեսանկիւնից է, եւ կարեւորութիւն չի տրուում, թէ ով յաղթող դուրս եկաւ. պարզապէս Բէլը մնաց կառուցուող աշտարակի աւերակների տակ:

#### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 
- <sup>1</sup> Լեւոն Խաչիկեան, *Եղիշէի «Արարածոց Մեկնութիւնը»*, Երեւան, 1992:  
<sup>2</sup> *Մատենագիրք Հայոց, Ա. Հտր., Ե. Դար*, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2003, էջ 765:  
<sup>3</sup> Խաչիկեան, էջ 114-147:  
<sup>4</sup> Տե՛ս նոյն՝ ցանկը, էջ 321:  
<sup>5</sup> *Մատենագիրք Հայոց*, էջ 813:  
<sup>6</sup> *Մատենագիրք Հայոց*, էջ 809-810:  
<sup>7</sup> Նոյն, էջ 818:  
<sup>8</sup> Նոյն, էջ 810:  
<sup>9</sup> Նոյն, էջ 809:  
<sup>10</sup> Առաքել Դարիժեցի, *Գիրք Պատմութեանց*, Ամստերդամ, Տպգր. Ոսկան Երեւանցի, Տպ. Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի, 1669:  
<sup>11</sup> Նոյն:  
<sup>12</sup> Խորենացի, Ա., Գլ. Ժ.:  
<sup>13</sup> Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, թարգմ., ներած. եւ ծան. Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1968, էջ 328 ծան. 27:  
<sup>14</sup> Մանուկ Աբեղեան, *Երկեր, Հտր. Գ.*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1968, էջ 33:

- <sup>15</sup> Հ. Մ. Չամչեանց, *Պատմութիւն Հայոց, Հտր. Ա.*, Վենետիկ, Յովհաննէս Փիագ-եանցի Տպարան, 1784, էջ 62:
- <sup>16</sup> Սեբեոս, գլ. Ա.:
- <sup>17</sup> Sergey Glinka, *Obozrenie Istoriyi Armyanskago Naroda, Chast Pervaya* (Հայ ժողովրդի պատմութեան տեսութիւն, առաջին մաս), Մոսկուա, 1832, էջ 44:
- <sup>18</sup> *The Book of Jubilees or The Little Genesis*, translated from the editor's Ethiopic text and edited, with introduction, notes and indices by R. H. Charles, London, 1902, էջ 61. հմմտ.՝ Գեորգ Մադոյեան, «Յոբելէնից Գիրքը՝ Հայքի Մասին», *Էջմիածին*, 2012, Բ., էջ 64:
- <sup>19</sup> Նոյն, էջ 65:
- <sup>20</sup> Խորենացի, Գիրք Ա., Գլ. Զ.: Կէտադրել ենք այսօրուայ կանոններով:
- <sup>21</sup> *Մատենագիրք Հայոց*, էջ 809-810:
- <sup>22</sup> *Մատենագիրք Հայոց*, էջ 813:
- <sup>23</sup> A. Afanasyev, *Poeticheskiye Vozzreniya Slavian Na Prirodu* (Սլաւոնների՝ բնութեան հանդէպ ունեցած բանաստեղծական ըմբռումները), Մոսկուա, 1865, էջ 349-359. հմմտ. <http://ru.wikipedia.org/wiki/Падыра#>:
- <sup>24</sup> Դժուար չէ սրանով նկատել, որ «Մասնայ Տան» հերոսների «թուր-կէծակին» եւս սերում է վաղնջական ժամանակներից: Բացի այս Գարեգին Սրուանձտեանցը գրառել է Վանի տարեցների վի աւանդագրոյց, ուր նկարագրուում է, թէ ինչպէս են սատանաները հաւաքուում՝ կամենալով արելը ծածկել մարդկանցից, «*բայց հրեշտակները հրեղէն սրով կը պատերազմին, կը զարնեն, կը վանեն զանոնք սեւ ամպերու միջէն. եւ այս կռուի ձայնն է ամպերէն եղած որոտումն. փայլակը՝ Գաբրիէլ հրեշտակի սուրն է, կայծակը՝ հրեղէն նետն ու ծիածանը՝ աղեղն*» (Գ. Սրուանձտեանց, *Երկեր, Հտր. I.*, Երեւան, ՀՍՄՀ ԳԱ Հրատ., 1978, էջ 77): Ինչպէս այս կապակցութեամբ նկատել է Սարգիս Յարութիւնեանը՝ «...ամպրոպային աստծուն քրիստոնէութեան ազդեցութեամբ փոխարինել է Գաբրիէլ հրեշտակը» (Ս. Յարութիւնեան, *Հայ Առասպելաբանութիւն*, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան Տպ., [2000], էջ 89):
- <sup>25</sup> U. X. L. *Encyclopedia of World Mythology*, Gale, Cengage Learning, USA, 2009, էջ 943: Ծիածանային զէնք վերագրուում է նաեւ Ինդրային (Afanasyev, էջ 349): Սա բացատրելի է նրանով, որ համաձայն որոշ տեսութիւնների Շիւան՝ վեդաների Ինդրայի «շարունակութիւնն» է (Wendy Doniger, *Asceticism and Eroticism in the Mythology of Siva*, London, Oxford University Press, 1973, էջ 84-89):
- <sup>26</sup> <http://ec-dejavu.ru/r/Rainbow.html>:
- <sup>27</sup> *Մատենագիրք Հայոց*, էջ 813:
- <sup>28</sup> [http://en.wikipedia.org/wiki/Chinvat\\_Bridge](http://en.wikipedia.org/wiki/Chinvat_Bridge):
- <sup>29</sup> Charles Francis Keary, *Outlines of Primitive Belief Among the Indo-European Races*, London, 1882, էջ 292:
- <sup>30</sup> *Outlines of the History of Religion to the Spread of the Universal Religions*, Translated from Dutch by Estlin Carpenter, London, 1888, էջ 177:
- <sup>31</sup> <http://blagoverie.org/holy/rituals/document228.shtml>. “Ահուրա Մազդա նկարագրուում է փայլարձակ հանդերձանքով եւ աստղերով զարդարուած գօտիով (Ясна 30.5)”. հմմտ. [http://www.avesta.org/yasna/yasna.htm#y28\\*star-bespangled\\_girdle](http://www.avesta.org/yasna/yasna.htm#y28*star-bespangled_girdle)”:

- <sup>32</sup> Այս կապակցութեամբ տե՛ս՝ Tsitseron, *O Priode Bogov* (Աստուածների բնութեան մասին), III 52, հմմտ.՝ Manfred Lurker, *The Routledge Dictionary of Gods and Goddesses, Devils and Demons*, London & New York, 2004. նաև՝ Jenny March, *Cassell's Dictionary of Classical Mythology*, Wellington House, London, 2001: Սոյն հեղինակը նշում է այն տեղերը, ուր կարելի է հանդիպել ծիսական Երիսին՝ Homer, *Iliad* 2.786-807, 3.121-40, 5.352-69, 8.397-425, 11.185-210, 15.143-217, 18.165-202, 23.192-225, 24.77-99, 143-88; Homeric Hymn to Apollo 102-14; Hesiod, *Theogony* 265-9, 780-7; Apollonius, *Argonautica* 2.283-300, 4.753-79; Callimachus, *Hymn* 4.228-39:
- <sup>33</sup> Ա. Պետրոսեան, «Ծիսականը Հայոց Պատկերացումներում. Համեմատական Քննութիւն», *Պատմաբանասիրական Հանդէս*, 2010, № 3, էջ 198-219:
- <sup>34</sup> *Փիլոնի Երրայեցոյ Մնացորդը Ի Հայս*, աշխատասիրութեամբ Հ. Սկրտիչ Աւգերեանց, Վենետիկ, Ս. Ղազար, 1826:
- <sup>35</sup> <http://www.earlyjewishwritings.com/text/philo/book42.html>
- <sup>36</sup> [http://ru.wikipedia.org/wiki/Филон\\_Александррийский#](http://ru.wikipedia.org/wiki/Филон_Александррийский#)
- <sup>37</sup> *Թովմայի Արժրունոյ Պատմութիւն Տանն Արժրունեաց*, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 19:
- <sup>38</sup> *Մատենագիրք Հայոց*, էջ 815-816:
- <sup>39</sup> The New John Gill Exposition of the Entire Bible. <http://www.studylight.org/com/geb/view.cgi?book=ge&chapter=011&verse=004#r:>
- <sup>40</sup> Նոյն:
- <sup>41</sup> [http://en.wikipedia.org/wiki/Adam\\_Clarke](http://en.wikipedia.org/wiki/Adam_Clarke):
- <sup>42</sup> [http://en.wikipedia.org/wiki/Albert\\_Barnes\\_\(theologian\)](http://en.wikipedia.org/wiki/Albert_Barnes_(theologian)):
- <sup>43</sup> <http://biblecommenter.com/genesis/11-3.htm>:
- <sup>44</sup> *Մատենագիրք Հայոց*, էջ 816:
- <sup>45</sup> <http://news.discovery.com/history/archaeology/tower-of-babel-111227.htm>:
- <sup>46</sup> Հերոդոտոս, *Պատմութիւն Ինը Գրքից*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1986, էջ 74, պարբ. 181:
- <sup>47</sup> *Մատենագիրք Հայոց*, էջ 816:
- <sup>48</sup> “The Book of Jubilees or The Little Genesis”, էջ 82 .“**forty and three** years were they building it”, հմմտ. ”Книга Юбилеев”, Vved. I Rus. Per. Prof. A. Smirnova: 2i Vip., Apokrifov Vetkhogo Zaveta (Յոբելեանական գիրք, յառաջաբանը եւ ուսերէն թարգմանութիւնը պրոֆ. Ա. Սմիրնովի, Բ. Հրատ Հին Կտակարանի), Կազան, 1895 ([http://krotov.info/library/bible/comm3/vz\\_apokr1.htm](http://krotov.info/library/bible/comm3/vz_apokr1.htm)). “Եւ նրանք այս կառուցեցին 43 տարիների ընթացքում”. հմմտ.՝ “Le Livre des Jubilés, Moïse, Version française intégrale”, Copyright @ 2010 Filbluz éditions, էջ 28. “Et ils construisirent ça; 43 ans pour construire ça” եւն.:
- <sup>49</sup> [http://en.wikipedia.org/wiki/Tower\\_of\\_Babel](http://en.wikipedia.org/wiki/Tower_of_Babel):
- <sup>50</sup> *The Book of Jubilees*, translated from the Ethiopic by Rev. George H. Schodde, Ph. D. Professor in Capital University, Columbus, Ohio, Oberlin, Ohio: E. J. Goodrich, 1888, էջ 37:
- <sup>51</sup> Յովհաննէս Թլկուրանցի, *Տաղագիրք*, Հրատ. Ն. Եպս. Ծովական, Երուսաղէմ, էջ 94:
- <sup>52</sup> *The Biblical Antiquities of Philo*, translated by M. R. James, London, 1917: Այս գործը թուագրում է Ք.է. 70 եւ չի կարող պատկանել Փիլոն Ալեքսանդրացուն (Ք.ա.

---

25/20-Ք.ե. 50): Փիլոնի լատիներեն թարգմանությունների հետ պահպանուած լինելու հանգամանքով այն համարում են Կեղծ-Փիլոն (<http://en.wikipedia.org/wiki/Pseudo-Philo>):

<sup>53</sup> Այս անունը մերթ գրում է մեկ, մերթ երկու նով: Իւրաքանչիւր դիրքում թողել ենք բնագրում եղածը:

<sup>54</sup> *The Biblical Antiquities of Philo*, էջ 87:

<sup>55</sup> <http://en.wikipedia.org/wiki/Dodanim>:

<sup>56</sup> Եւ որդիք Եւանայ Եղիսա եւ Թարթիս. Կիտացիք, եւ Ռողացիք. Ծննդ. Ժ., 4:

<sup>57</sup> “An historical treatise of the travels of Noah into Europe: Containing the first inhabitation and peopling thereof” (*Պատյուների Գիրքը*). Done into English by Richard Lynche, Gent. London, 1601, պարբ. 11, հմմտ. Գ. Մադոյեան, «Հայկեան Առասպելին Առնչուող Դրուագներ Յետ-Ջրհեղեղեան Պատմութիւնից», *Էջմիածին*, 2012, Զ., էջ 87:

<sup>58</sup> *Մատենագիրք Հայոց*, էջ 817:

<sup>59</sup> Մ. Էմին, *Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց*, Մոսկուա, 1860, էջ 29:

<sup>60</sup> *Բառարան Սուրբ Գրոց, Հանդերձ Պատկերօք, Աշխարհացուցօք Եւ Տախտակօք*, Կոստանդնուպոլիս, Տպ. Ս. Յակոբ Պոյաճեան, 1881:

<sup>61</sup> Նոյն:

<sup>62</sup> *Մատենագիրք Հայոց*, էջ 784:

<sup>63</sup> Չամչեան, էջ 153:

<sup>64</sup> Նոյն, էջ 157:

<sup>65</sup> Նոյն, էջ 156:

<sup>66</sup> Այրիվանեցու տարբերակում՝ «համեմական» (*Մխիթարայ Այրիվանեցոյ*, էջ 28):

<sup>67</sup> *Մատենագիրք Հայոց*, էջ 818:

<sup>68</sup> Մադոյեան, «Հայկեան Առասպելին...», էջ 77-78:

FRAGMENTS ON THE LINEAGE OF ARMENIANS  
IN YEGHISHE'S INTERPRETATION OF THE BOOK OF JUBILEES  
(SUMMARY)

GEVORG MADOYAN

Research on Armenian mythology, and specifically on the legend of Hayk and Bel, which sheds light on the lineage of Armenians, is largely based on Movses Khorenatsi's (5<sup>th</sup> century) book of the history of the Armenians, an old and trustworthy source. In his book *Interpretation of Genesis* Yeghishe (5<sup>th</sup> century) does not engage in the history of Armenian ancestry. Nonetheless, sometimes, when the biblical story and Armenian legend overlap, Yeghishe writes down details which are found in no other Armenian manuscripts.

By quoting the passages which relate to the story of Hayk and Bel and analyzing them, the author tries to highlight aspects and details of ancestral Armenian lineage.